ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ՝ ԻՐԵՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԾԱԽՍԵՐԻ ԱՄՍԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Նաիրի համայնքի ավագանու <<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցության կողմից 2022 թվականի փետրվարի 11-ին Նաիրիի համայնքապետարանի աշխատակազմին էր ներկայացվել <<Նաիրի համայնքի ավագանու անդամներին դրամական փոխհատուցում տրամադրելու մասին>> որոշման նախագիծը, որով առաջարկվում էր Նաիրի համանքի ավագանու անդամների իրենց պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց Նաիրի համայնքի բյուջեով նախատեսված համապատասխան գումարներից տրամադրել ամսական դրամական փոխհատուցում՝ <<Նվազագույն աշխատավարձի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Հայաստանի Հանրապետության նվազագույն աշխատավարձի չափով՝ առանց ավագանու կողմից իրենց պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերը հիմնավորող փաստաթղթերի:

Ներկայացված որոշման նախագծով առաջարկվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 24-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն սահմանել Նաիրի համանքի ավագանու անդամների իրենց պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ամենամսյա պատգամավորական ծախսերի մինչև 30%-ի չափով՝ իրենց պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերը հիմնավորող փաստաթղթերի առկայության դեպքում:

ՏԵՂԵԿԱՆՔ

Նաիրի համայնքի ավագանու անդամների՝ իրենց պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի ամսական փոխհատուցման մասին որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Նաիրի համայնքի բյուջեում ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին

Նաիրի համայնքի ավագանու անդամների՝ իրենց պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի ամսական փոխհատուցման մասին որոշումը 2022 թվականի բյուջեում ենթադրում է ծախսերի ավելացում՝ ըստ ներկայացված փաստատթղթերի: